

Ստեփանավան համայնք

Կրթության ոլորտ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
Հաշվառում - Տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տվյալների հավաքագրում /ծննդյան վկայական, անձնագիր/:		V		Ներկայացված են տեղեկանքներ բնակության վայրի մասին	Բնակության վայրի մասին տեղեկանքների փոխարեն ծնողից պահանջել բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք	Մեկամսյա ժամկետում
Ընդգրկում-Հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի հիման վրա հրամանագրված երեխաների ֆինանսավորում:	V					
Ծրագրերի մշակում և իրականացում- համայնքի իրավիճակի վերլուծություն, կարիքների ճշգրտում, համայնքի համախմբում, ծրագրի առաջարկի մշակում և ներկայացում, ծրագրի առաջարկում նախատեսված ներդրումների ապահովում:	V					
Նախադպրոցական հաստատության ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշների համապատասխան:	V					

- Պաշտոնային դրույքաչափերով 5-օրյա աշխատանքային շաբաթվա և 8-ժամյա աշխատանքային օրվա տևողության դեպքում դաստիարակներին պետք է հատկացվեն 1.1-ական հաստիքային միավորներ, մինչդեռ հատկացվել են 1-ական հաստիքային միավորներ:

Առաջիկա ավագանու նիստում նախատեսված է հաստիքացուցակներում կատարել համապատասխան փոփոխություններ:

- Ստեփանավանի թիվ 1 մանկապարտեզի դաստիարակ Քրիստինե Վարդանյանի կրթությունն ու աշխատանքային փորձը չեն բավարարում ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով հաստատված ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆատրակավորման բնութագրերի պահանջներին, քանի որ ունի ռուսաց լեզվի ուսուցչի որակավորում և չունի աշխատանքային փորձ:

Քանի որ նա գտնվում է հետծննդյան արձակուրդի մեջ, աշխատանքից կազատվի արձակուրդից վերադառնալուց հետո:

- Ստեփանավանի թիվ 5 մանկապարտեզի դաստիարակ Մերի Վարդանյանն ավարտել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժինը, չունի համապատասխան աշխատանքային փորձ: Աշխատանքի է ընդունվել 2 ամիս փորձաշրջանով մինչև համապատասխան մասնագետի ընդունումը: Հաստիքը թափուր է լինելու մինչև հետծննդյան արձակուրդից հիմնական աշխատողի վերադառնալը (2020թ. մարտ): Աշխատանքի հայտարարությունը տեղադրված է քաղաքապետարանի կայքում:

- Ստեփանավանի թիվ 5 մանկապարտեզի դաստիարակ Սերինե Մանուկյանի կրթությունն ու աշխատանքային փորձը չեն բավարարում ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով հաստատված ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆատրակավորման բնութագրերի պահանջներին, քանի որ ավարտել է «Մանկավարժություն և հոգեբանություն» բաժինը և ունի մանկավարժ հոգեբանի որակավորում:

- Ստեփանավանի թիվ 5 մանկապարտեզի երաժշտական դաստիարակ Լիանա Բախշինյանը սովորում է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի «Երաժշտական կրթություն» բաժնում:

Աշխատանքի հայտարարությունը տեղադրված է քաղաքապետարանի կայքում: